**Государственное учреждение**
**“Бюро по реализации**
**градостроительных программ”**
**Министерства градостроительства**
**Республики Армения**

State Agency “Urban Development
Projects Implementation Unit”
at the Ministry of Urban Development
of the Republic of Armenia.

**Հայաստանի Հանրապետության**
**Քաղաքաշինության նախարարության**
**«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման**
**գրասենյակ» պետական հիմնարկ**

0010, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ
Կառավարական տուն 3,
0010, г. Ереван, пл. Республики, Дом Правительства 3,
Governtment House 3, Republic Square,
Tel.: 526550 Fax: 526550

13.02.14 N ՃՇԿ-82-14

<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/19>> ծածկագրով շրջանակային
համաձայանգիր կնքած բոլոր Մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Քաղաքաշինության նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և հնարավոր մասնակիցների միջև կնքված <<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/19>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություն /Ավտոմեքենաների լվացում/:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով, **մինչև 2014 թվականի փետրվարի 25-ը ժամը 12:00-ն:**

Հայտերը կբացվեն www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով **25.02.2014թ. ժամը 12:00-ին:**

Հայտը ներառում է.

**1.Մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված 1),**

**2.Մասնակցի գնային առաջարկ (հավելված 2):**

Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (հավելվածներ)՝ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Մասնակիցը Հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

-**<<Պիտանելիության չափորոշիչ>>.**

Ընթացակարգին մասնակցելու դիմում՝ (Հավելված 1), ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային հասցեն:

-**<<Ֆինանսական չափորոշիչ>>.**

գնային առաջարկ (Հավելված 2), որը կայքում ներկայացվում է պայմանգրի կատարման ընդհանուր արժեքով **և կայքում պարտադիր լրացվում է առանց ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի գումարի հաշվարկման:**

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/19 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ կողմից կազմակերպված գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ **ՔՆ-ՇՀԾՁԲ-14/1:**

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով <<Գնումների մասին>> օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն՝ [signature] Հ. Սարգսյան

Կատ.
Ա. Համբարձումյան
հեռ. 56-43-16